


ԱՐԱԳ ՄԵԿՆԱՐԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրության նպատակները



Ի՞ՆՉՆ Է ՆՈՐ ԱՅՍ ՏԱՐԻ

2021 թվականի հունվարի 1-ից սկսած դասընթացի միավոր ցանկացող սեմինարիայի ուսանողները պետք է դասընթացի սուրբ գրությունները կարդան կիսամյակի օրացուցային օրերի առնվազն 75 տոկոսի ընթացքում (տես «Սուրբ գրությունների ընթերցանության ակնկալիքները» կապված դասընթացն ավարտելու հետ» քաղաքականության դրույթները): Ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին իրականացնել դա՝ աջակցելով նրանց սուրբ գրությունների ուսումնասիրության և ամենօրյա նպատակներ դնելու և դրանց հասնելու գործում:



ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Երբ ձգտում ենք դառնալ Հիսուս Քրիստոսի աշակերտները, Նրան լսելու մեր ջանքերը պետք է լինեն ավելի գիտակցված: Պահանջվում է աչալուրջ և հետևողական աշխատանք, որպեսզի մեր առօրյա կյանքը լցվի Նրա խոսքով, Նրա ուսմունքներով և Նրա ճշմարտություններով: . . . Ամեն օր Աստծո խոսքի մեջ ընկղմվելը շատ կարևոր է հոգևոր գոյատևման համար, հատկապես՝ աճող ընդլզման այս օրերին: Երբ ամեն օր սնվենք Քրիստոսի խոսքերով, Քրիստոսի խոսքերը կասեն մեզ, թե ինչպես արձագանքենք այն դժվարություններին, որոնց, չէինք մտածի, որ երբևէ կբախվենք» («Լսի՛ր Նրան», ապրիլ 2020 գերագույն համաժողով):



ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՔ ՕԳՆԵԼ ՁԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին՝ յուրաքանչյուր դասաժամի ընթացքում սուրբ գրությունների հետ կապված ուսումնական իմաստալից փորձառություններ ստեղծելով: Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ուսուցիչները պետք է ուսանողներին ժամանակ տրամադրեն քննարկելու սուրբ գրությունների ուսումնասիրության կարևորությունը և դրա հնարավորությունը օգնելով նրանց ավելի մոտենալ իրենց Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Ուսանողներին պետք է խրախուսել՝ սահմանելու սուրբ գրությունների ուսումնասիրության իրենց ամենօրյա նպատակները: Ուսուցիչները կարևոր դեր ունեն՝ օգնելու ուսանողներին իրականացնել սուրբ գրությունների ուսումնասիրության իրենց ամենօրյա անձնական նպատակները: Ահա մի քանի եղանակներ, որոնցով ուսուցիչները կարող են կատարել այդ դերը.

- Օգտագործեք սուրբ գրությունները և մեր օրերի մարգարեների ուսմունքները, որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրության կարևորությունը՝ առ Հիսուս Քրիստոսն իրենց իսկ աշակերտության և դարձի համար:
- Օգնեք ուսանողներին սահմանել սուրբ գրությունների ուսումնասիրության ամենօրյա նպատակներ, որոնք տեղին են, բովանդակալից և հարմարեցված են նրանց կարիքներին և ունակություններին:
- Ճանաչեք ուսանողներին և պարբերաբար կապ պահեք նրանց հետ և գրուցեք սուրբ գրությունների ուսումնասիրության հետ կապված նրանց փորձառությունների մասին:

- Դասարանում ուսանողների համար պարբերաբար հնարավորություններ ստեղծեք, որպեսզի նրանք վկայեն, թե ինչ են սովորում և ինչ են գգում Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի վերաբերյալ սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության միջոցով:
- Պարբերաբար օգնեք ուսանողներին հաշվետվություն ներկայացնել՝ դասարանում ուսանողների համար հնարավորություններ ստեղծելով հետևելու սուրբ գրությունների իրենց ամենօրյա ուսումնասիրությանը mySeminary հավելվածում կամ ձայնագրման այլ եղանակով:
- Օգնեք ուսանողներին և խրախուսեք նրանց լրացնել սուրբ գրությունների ընթերցանության բացթողումները, եթե նրանք թերանում են հասնել 75 տոկոսին:



ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ՆՅՈՒԹԵՐ

- Բոլոր ուսուցիչները պետք է վերապատրաստվեն իրենց անմիջական ղեկավարների կողմից ծառայության անձնական փորձառությունների կամ ամենամյա քննարկումների միջոցով: Այս դասընթացի հետ կապված տեղական հարմարեցումները պետք է կատարվեն տարածաշրջանի տնօրենի հետ խորհրդակցելուց հետո:
- Ուսանողների սուրբ գրությունների ամենօրյա ընթերցանությունը mySeminary հավելվածում գրանցելու և դրան հետևելու նպատակով առաջարկները կարելի է գտնել այստեղ՝ <https://web.microsoftstream.com/channel/8600711f-29ec-40c8-99d2-c1240a7204ec>:
- Տեղական հարմարեցումը կարող է իրականացվել այն վայրերում, որտեղ mySeminary հավելվածը հասանելի չէ:
- Քաղաքականության ձեռնարկի «Օժանդակ աշխատանք» բաժնի սկզբունքները պետք է կիրառվեն այն ուսանողներին օգնելու դեպքում, ովքեր ունեն սուրբ գրությունների ընթերցանության 75 տոկոսից ցածր ցուցանիշ: Սուրբ գրությունների ընթերցանության օժանդակ աշխատանքի օրինակներ կարող եք գտնել վերևում տրված ծառայությունների համառոտ շարադրանքների աղյուսակում:

